«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Հաստատված է՝

ԿՏՊՔ-ի կառավարման խորհրդի

2017 թվականի օգոստոսի 4 -ի նիստի որոշմամբ

ԿՏՊՔ կառավարման խորհրդի նախագահ՝

Ռ. Մարտիրոսյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՀՐԱԶԴԱՆ 2017

I.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Սույն կանոնակարգը սահմանում է Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի (այսուհետ՝ ԿՏՊՔ) խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) նախագահի, քարտուղարի և անդամների իրավասությունը, նիստերի նախապատրաստման, գումարման, անցկացման, քվեարկության, նիստերի արձանագրման, որոշումների ընդունման կարգը:

2.Խորհրդի կանոնակարգը հաստատում է խորհուրդը:

3.Խորհրդի աշխատանքների հետ կապված ծախսերը կատարվում են ԿՏՊՔ-ի միջոցների հաշվին:

II.ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.ԿՏՊՔ-ի կառավարման խորհուրդը բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմին է, որը ստեղծվում է 5 տարի ժամկետով, քոլեջի կանոնադրությանը համապատասխան:

5.Խորհրդի անդամների թիվը 12 –ն է:

6.Խորհուրդը ձևավորվում է քոլեջի դասախոսական կազմի, ուսանողության, հիմնադրի և պետական կառավարման լիազոր մարմնի(այսուհետ՝ լիազոր մարմին), սոցիալական գործընկերների, տարածքային զբաղվածության ծառայության ներկայացուցիչներից:

7.Քոլեջի դասախոսական կազմից խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրվում հաստատության մանկավարժական խորհրդի կողմից: Քոլեջի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված թեկնածուները ներկայացվում են լիազոր մարմին: Դասախոսական կազմից ընտրված խորհրդի անդամները կազմում են խորհրդի անդամների 20 տոկոսը՝ երկու հոգի:

8.Քոլեջի ուսանողության ներկայացուցիչներից խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում ուսանողական խորհուրդը՝ բարձր առաջադիմություն և հասարակական ակտիվ դիրքորոշում ունեցող ուսանողներից: Քոլեջի ուսանողական խորհուրդը ընտրում է ուսանող-թեկնածուներին և ներկայացնում լիազոր մարմին: Ուսանողական կազմից ընտրված խորհրդի անդամները կազմում են խորհրդի անդամների 25 տոկոսը՝ 3 հոգի:

9. Խորհրդի անդամների ընդհանուր թվի 10 տոկոսի չափով՝ 1 թեկնածու, լիազորված մարմնին առաջադրում է քոլեջի մարզի մարզպետը:

10.Խորհրդի անդամներից 5-ին, այդ թվում՝ պետական պաշտոն զբաղեցնող, գիտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտների ներկայացուցիչներ՝1, սոցիալական գործընկերներ՝ 3, տարածքային զբաղվածության ծառայության ներկայացուցիչներ՝ 1, որոշում է լիազորված մարմինը:

11. Առաջադրված անձանց թեկնածությունների հիման վրա խորհրդի անվանական կազմը հաստատում է լիազոր մարմինը:

12. Խորհուրդն իր կազմից, քվեարկությանը մասնակցած անդամների ձայների մեծամասնությամբ ընտրում է խորհրդի նախագահ: Խորհրդի նախագահ չի կարող լինել խորհրդում քոլեջի ուսանողական խորհրդի ներկայացուցիչը, քոլեջի հաստիքային աշխատողը (ամբիոնի վարիչ, առարկայական (ցիկլային) հանձնաժողովի նախագահ, դասախոս, այլ աշխատող):

13. Խորհրդի անդամ չի կարող լինել տնօրենը:

14.Խորհրդի քարտուղարը իրականացնում է նիստերի գործավարությունը:

15. Խորհրդի իրավասություններն են՝

- ✓ քննարկում և լիազորված մարմնի հաստատմանն է ներկայացնում քոլեջի կանոնադրությունում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին առաջարկություններ
- ✓ հաստատում է իր աշխատակարգը, ընտրում է խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, քարտուղար
- ✓ սահմանում է տնօրենի ընտրության մրցութային ընթացակարգը, կազմակերպում, անցկացնում է մրցույթը և մրցույթում հաղթող ճանաչված տնօրենի թեկնածուին (թեկնածուներին) ներկայացնում է լիազորված մարմնին
- ✓ իրականացնում է տնօրենի գործունեության ընթացիկ վերահսկողությունը, քննարկում և հաստատում է նրա հաշվետվությունները
- ✓ քոլեջի կանոնադրության 36-րդ կամ 41-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում կարող է լիազորված մարմնին առաջարկություն ներկայացնել տնօրենի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ
- ✓ քոլեջի ուսանողների կրթության և դաստիարակության որակի կատարելագործման, դասախոսական կազմի մանկավարժական վարպետության բարձրացման, ինչպես նաև առաջավոր փորձի կիրառման նպատակով, տնօրենի առաջարկությամբ, կարող է ստեղծել քոլեջի մանկավարժական, ուսումնամեթոդական մասնագիտական խորհուրդներ, ինչպես նաև ամբիոններ, մասնագիտական և առարկայական հանձնաժողովներ, սահմանել դրանց կազմերը, իրավասությունը և գործունեության կարգերը
- ✓ հաստատում է քոլեջի ռազմավարական ծրագրերը
- ✓ տնօրենի առաջարկությամբ կարող է սահմանել քոլեջի մանկավարժական աշխատողների նշանակման մրցութային ընթացակարգ, կազմակերպել և անցկացնել մրցույթը
- ✓ հաստատում է քոլեջի տնօրենի և դասախոսների գնահատման իրականացմանն ուղղված միջոցառումները
- ✓ լիազորված մարմին է ներկայացնում քոլեջի տարեկան ծախսերի նախահաշվի նախագծի վերաբերյալ իր առաջարկությունները

- ✓ սահմանում է քոլեջում մեկ ուսանողի համար ուսման վճարի չափը՝ համաձայնեցնելով լիազորված պետական մարմնի հետ,
- ✓ տնօրենի առաջարկությամբ սահմանում է ներքոլեջային կրթաթոշակներ և դրանց տրամադրման կարգը, ինչպես նաև ուսանողական նպաստներ, պետական և ներքոլեջային կրթաթոշակներ ստացող քոլեջի ուսանողների անվանական կազմերը
- ✓ հիմնադրի սահմանած կարգով որոշում է քոլեջի շահույթի տնօրինման ուղղությունները
- ✓ տնօրենի առաջարկությամբ քննարկում է քոլեջի ուսումնական պլանները և առարկայական ծրագրերի նախագծերը
- ✓ տնօրենի առաջարկությամբ քննարկում և առաջադրում է պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների թեկնածությունները
- ✓ քոլեջի գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում լիազորված մարմնին
- ✓ հաստատում է քոլեջի ստորաբաժանումների կանոնակարգերը, ներքին կարգապահական և այլ կանոնները, եթե հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ
- ✓ լիազորված մարմնի սահմանած նոր նպատակների և տարեկան թիրախների հիման վրա հաստատում է քոլեջի միջնաժամկետ բիզնես-պլանները և տարեկան պլանները
- ✓ հաստատում է տնօրենի և աշխատակիցների պարգևատրման, նյութական խրախուսման, ինչպես նաև պաշտոնից ազատման մեխանիզմների ներքին կանոնակարգերը
- ✓ հաստատում է քոլեջի տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը
- ✓ համաձայնություն է տալիս հաստատության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքման վերաբերյալ, եթե հիմնադրի որոշմամբ այլ բան նախատեսված չէ,
- ✓ իրականացնում է այլ լիազորություններ, ինչպես նաև հաստատում է քոլեջի գործունեությունը կանոնակարգող ներքին այլ փաստաթղթեր, եթե հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

Խորհրդի իրավասություններին պատկանող հարցերը չեն կարող փոխանցվել այլ մարմնի:

16.Խորհրդի նախագահը՝

- Հրավիրում է խորհրդի նիստերը և նախագահում դրանք
- Ստորագրում է խորհրդի որոշումներն ու արձանագրությունները
- Կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրության վարումը:

Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները խորհրդի որոշմամբ կատարում է խորհրդի անդամներից մեկը:

17. Խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության՝ հասարակական հիմունքներով:

18. Խորհրդի անդամներն իրավունք ունեն՝

- Ներկայացնելու առաջարկություններ խորհրդի նիստի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ,
- Նախապատրաստելու և խորհրդի քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ, որոշումների նախագծեր,
- Ստանալու տեղեկություններ քոլեջի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի մասին,

19. Խորհրդի անդամները պարտավոր են՝

- Մասնակցել խորհրդի նիստերին
- Իրենց պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով ՀՀ և մասնավորապես քոլեջի շահերից:

20.Խորհրդի անդամի լիազորությունները խորհրդի որոշմամբ դադարում է, եթե վերջինս՝

1) հրաժարական է տվել

2) առաջադրված է եղել քոլեջի ուսանողական խորհրդի կողմից և կորցրել է քոլեջի ուսանողի կարգավիճակը

3) առաջադրված է եղել քոլեջի մանկավարժական խորհրդի կողմից և կորցրել է քոլեջում իր աշխատանքը

4) դատապարտվել է ազատազրկման

5) դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ

6) առանց հարգելի պատճառի երեք անգամ չի մասնակցել խորհրդի նիստերին

7) մահացել է:

21. Խորհրդի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել լիազորված մարմնի որոշմամբ, եթե խորհուրդն առանց հարգելի պատճառի երեք անգամ անընդմեջ նիստեր չի գումարում կամ որոշում չի ընդունում իր լիազորությանը վերապահված հարցերի վերաբերյալ:

22. Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել լիազորված մարմնի որոշմամբ՝ խորհրդի այդ անդամի թեկնածությունն առաջադրած մարմնի առաջարկությամբ:

23. Խորհրդի կազմում թափուր տեղեր առաջանալու դեպքում այն համալրվում է քոլեջի կանոնադրության 22-րդ և 23-րդ կետերի պահանջներին համապատասխան թափուր տեղ առաջանալուց հետո՝ մեկ ամսյա ժամկետում:

24. Խորհրդի որոշումները կարող են Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով բողոքարկվել՝ լիազորված մարմնին կամ դատարան:

25.Խորհրդի քարտուղարը՝

- ✓ Ծանուցում է խորհրդի անդամներին նիստի օրվա, տեղի և օրակարգի մասին
- ✓ Գրանցում է խորհրդի ՝ նիստին մասնակցող անդամներին
- ✓ Կազմում և ստորագրում է խորհրդի նիստերի արձանագրությունները:

III.ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ

26.Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում և աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

27. Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր 3 ամիսը մեկ անգամ: Խորհրդի նիստերը գումարում է խորհրդի նախագահը՝ իր, խորհրդի անդամների մեկ երրորդի կամ տնօրենի նախաձեռնությամբ: Խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով խորհրդի նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանած ժամկետում և օրակարգով:

28. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը:

29. Խորհրդի նիստերն անցկացվում են սույն կանոնակարգին և խորհրդի աշխատակարգին համապատասխան: Խորհրդի նիստերին, ըստ անհրաժեշտության, խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են հրավիրվել քոլեջի աշխատողներ, ուսանողներ և նրանց ծնողներ, այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

IV.ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

30.Խորհրդի նախագահը, բացելով խորհրդի նիստը, հայտարարում է քվեակազմի առկայությունը և քվեարկության դնում օրակարգը:

31. Խորհրդի անդամները կարող են օրակարգի համար առաջարկել հարցեր, որոնք դրվում են քվեարկության:

32.Օրակարգի հարցերի քննարկման կարգը, հիմնական և հարակից զեկույցների, ելույթների տևողությունը որոշում է խորհուրդը:

V.ԽՈՐՀՐԴՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

33.Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

34.Քվեարկության ժամանակ խորհրդի անդամն ունի միայն մեկ ձայնի իրավունք: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անդամի չի թույլատրվում:

35.Խորհրդի նիստերն արձանագրվում են:

36. Խորհրդի նիստերը, որպես կանոն, բաց են:

VI.ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

37.Խորհրդի արձանագրությունը կազմում է խորհրդի քարտուղարը խորհրդի նիստն ավարտվելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում: Արձանագրությունը ստորագրում են խորհրդի նախագահը և քարտուղարը:

38.Արձանագրության մեջ պետք է նշվեն նիստի անցկացման ժամանակը, քվեակազմը, նախագահը, քարտուղարը, օրակարգը, ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները, ընդունված որոշումները: